

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 3-4 (81-82)

2018 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր դ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

14.12.2018

Հանձնված է տպագրության

17.01.2019

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 3-4 (81-82)
2018 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 14.12.2018
Подписано к печати 17.01.2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քրեական իրավունք և դատավարություն

Գևորգ Բաղդասարյան
 ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՆԱԿԱՐԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ
 ՉԱՓԱՆԻՇ 4

Դավիթ Մելքոնյան, Գայանե Մելիքյան
 ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ԱՌԱՋ ՔԱՇՎԱԾ ԿԱՐԿԱԾԻ ՀԵՐՔՈՒՄԸ
 ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԻ..... 14

Անի Դանիելյան
 ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԼԻՆԵՆՈՒ ԿԱՍԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԿԱԼԱՆԱԿՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ.
 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 23

Պարզև ՕՀԱՆՅԱՆ
 ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՆԵԼՈՒ ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 35

Անուշ Դանիելյան
 ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԽ ՆԿԱՏՄԱՍԲ ԴԱՏԱԿԱՆ
 ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
 ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԵՒՔ..... 42

Վարազդատ Սուքիասյան
 ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔՐԵԱԿԱՆ
 ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 48

Քաղաքացիական իրավունք և դատավարություն

Գրիգոր Բեքմեզյան, Նարինե Ավազյան
 ԱՆԲԱՐԵՆԻԿԻՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ
 ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 56

Անի Միքայելյան
 ԲԱՑԱՌԻԿ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 63

Նանե Սահակյան
 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 76

Սահմանադրական իրավունք

Անահիտ Մանասյան
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ
 ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 87

Պետության և իրավունքի տեսություն

Ռոզա Աբաջյան
 ԺՈՂՈՎՐԴԱԻԾԵԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
 ԱՄՐԱԳՐՈՒՄԸ 1995 Թ..... 99

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ԱՌԱՋ ՔԱՇՎԱԾ ՎԱՐԿԱԾԻ ՀԵՐՔՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՆՈՒԹԱԳՐԱՎԿԱՆ ՏԱՐԻ

Դավիթ Մելքոնյան

*ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,
իսլավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Գայանե Մելիքյան

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը (այսուհետ՝ նաև ՀՀ ՔԴՕ) սահմանում է ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման դատավարական կարգը՝ երաշխավորելով այդ գործընթացում անձի իրավունքների ապահովումը, հավաստի տեղեկությունների ստացումը և հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը:

Ապացույցների գնահատումը ապացույցման գործընթացի երրորդ փուլն է: Ճանաչողական տեսությունում ապացույցների գնահատումը բնորոշվում է որպես «օբյեկտի արժեքի արտահայտման սուբյեկտիվ միջոց»¹:

Ապացույցների գնահատման բնույթը հասկանալու համար չափազանց կարևոր է ճանաչողության օբյեկտի արժեքային բնութագրիչների ընկալումը որպես օբյեկտիվ բնութագրիչներ: Միևնույն ժամանակ գնահատումն ինքնին սուբյեկտիվ միջոց է երևույթի ինչպես դերային, այնպես էլ ցանկացած գործառնությունների բացահայտման համար²:

Մեկ այլ հեղինակ, տալով ապացույցման բնորոշումը, սահմանում է այն որպես դատաքննության ընթացքում ճշմարտության բացահայտում, դրա ճանաչում և դրա պարունակության վերաբերյալ պատկերացումների հիմնավորում³:

Ժամանակակից քրեադատավարական գիտությունը քրեական դատավարության նպատակ է դիտում ճշմարտության բացահատումը (կամ գոնե հանցագործության այն հանգամանքների մասին իմացությունը, որոնք թույլ կտան բացահայտելու գործը)⁴: Սակայն կարծում ենք՝ ճշմարտության բացահայտումը որպես քրեական դատավարության նպատակ դիտելը առավելապես կախված է այդ պահին գործող դատավարական ձևից (մոդելից):

Քրեադատավարական ապացուցումը, որպես կանոն, դիտվում է ճանաչողության գործընթացի տարատեսակ, այն հիմնվում է արտացոլման համընդհանուր կանոնի վրա, ենթարկվում է ընդհանուր օրինաչափություններին⁵: Սակայն գոյություն

¹ Տե՛ս **Кудрявцева А. В.** Судебная экспертиза в уголовном процессе России. Челябинск, 2001, էջ 234:

² Տե՛ս **Теория познания в 4 т. Т. 2 Социально-культурная природа познания/ Под ред. В. А. Лекторского, Т. И. Озермана, М., 1991, էջ 57:**

³ Տե՛ս **Белкин А. Р.** Теория даказывания М., 1999 էջ 1-2:

⁴ Տե՛ս **Хашимов Р. А.** Категория «Цель» в уголовном процессе: Автореф. дисс. канд. юрид. наук. Челябинск, 2006, էջ 10:

⁵ Տե՛ս **Сельвестру Ю. Р.** Доказывание-обоснование самостоятельный элемент доказывания в уголовном судопроизводстве. //Вестник Омского университета. Серия «Право», 2008, № 1, էջ 255-258:

ունեն մի շարք բնութագրական գծեր, որոնք բնորոշ են քրեական դատավարությունում ապացուցմանը: Որոշ յուրահատկություններով օժտված են պայմանները, որոնցում իրականացվում է ապացուցումը: Այդպիսի առանձնահատկությունների շարքին կարելի է դասել քննության իրականացման սահմանափակ ժամկետը, ցանկացած պարագայում որոշում կայացնելու սուբյեկտի պարտականությունը, քննության ընթացքում այնպիսի միջոցների օգտագործումը, որոնք նախատեսված են կամ չեն հակասում օրենքին, քննության իրականացումը օրենքով նախատեսված սուբյեկտների կողմից: Պայմանները, որոնցում իրականացվում է քննությունը, դժվարանում են նաև այն պատճառով, որ շատ հաճախ քննություն իրականացնող սուբյեկտին ընդդիմանում է անձ, որը ուղղակիորեն շահագրգիռ է քննության անհաջող իրականացմամբ¹:

Տեսության մեջ առկա ապացույցի՝ մեզ համար առավել ընդունելի բնորոշման համաձայն՝ այն ձևի և բովանդակության միասնականություն է, որտեղ բովանդակությունը փաստական տվյալներն են, իսկ ձևը՝ փաստական տվյալների ստացման օրենքով նախատեսված աղբյուրները²:

Նմանատիպ մոտեցում է առկա ՀՀ ՔՂՕ-ում, որի 104 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալներ, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Վերոնշյալ հոդվածի 2-րդ մասն էլ անդրադառնում է ապացույցի ստացման աղբյուրներին:

Չնայած թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, թե՛ ՀՀ վճռաբեկ դատարանը իր մի շարք նախադեպային որոշումներով հստակ սահմանել են ապացույցներին և ապացուցմանը ներկայացվող պահանջները և դատարանների կողմից կայացվող դատական ակտերի պարտադիր պատճառաբանված լինելու հանգամանքը, այնուամենայնիվ գործնականում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնց էլ կփորձենք անդրադառնալ ստորև:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի համաձայն՝
«(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի համաձայն՝

«1.Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

¹ Տե՛ս **Белкин А. Р.** Теория доказывания М., 1999, էջ 3:

² Տե՛ս **Уголовно-процессуальное право России**, учебник под ред. П. А. Лупинской, М., 2003, էջ 226-228:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 365 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ»:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 371 հոդվածի հմաձայն՝

«Դատավճիռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում

(...)

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույց անարժանահավատ համարելու փաստարկները»:

«Ապացույցների բավարարություն» հասկացության էությունը, ապացույցների բավարարությունը որոշելու ընդհանուր չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը Վճռաբեկ դատարանը քննարկել և վերլուծել է Ս. Սաքանյանի վերաբերյալ գործով կայացված որոշման շրջանակներում:

Մասնավորապես, վկայակոչված որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, համեմատական վերլուծության ենթարկելով «ապացուցման առարկա» և «ապացույցների բավարարություն» հասկացությունները, նշել է. «(...) եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևություն: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ի՞նչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ի՞նչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:

Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:

Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առան-

ծին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,

2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,

3) անմեղության կանխավարկած¹:

Վերահաստատելով և զարացնելով մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն Ա. Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է, որ «ապացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

1) անմեղության կանխավարկածը,

2) վարույթն իրականացնողների ներքին համոզմունքը,

3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատարարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

Հարկ է նշել նաև, որ անմեղության կանխավարկածն ամրագրող նորմերը, ինչպես նաև նախադեպային իրավունքը սահմանում են ոչ միայն այդ սկզբունքի բուն էությունը, այլև դրա հաղթահարման, նույնն է թե՛ անձի մեղավորության հաստատման համար անհրաժեշտ դատավարական չափորոշիչներ: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը Մ. Հակոբյանի գործով որոշման մեջ շեշտել է. «(...) ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի **ապացույցներով և ոչ թե ենթադրություններով**: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կա-

¹ Տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԵԴ/0058/01/10 որոշման 15-19-րդ կետերը:

պակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը (...):»¹:

Ապացույցների բավարարությունը որոշելու մյուս չափանիշին՝ ներքին համոզմունքին, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Մ. Հովհաննիսյանի և Ա. Մարտիրոսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը»²:

Այսպիսով, «ներքին համոզմունքը» սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կայացրած որոշման հիմնավորվածության մեջ (սուբյեկտիվ բնույթ): Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությամբ և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մեջ ողջամտորեն կծեկվորեն նույն համոզվածությունը (օբյեկտիվ բնույթ):

Ներքին համոզմունքը չի կարող ձևավորվել առանց օբյեկտիվ հիմքի և հիմնվել անթույլատրելի, ոչ վերաբերելի, անարժանահավատ ապացույցների վրա: Այլ խոսքով՝ այն հիմնվում է ողջամիտ կարծիքի, գիտելիքի և ոչ թե ենթադրությունների, երևակայության, համակրանքի, հակակրանքի կամ կանխակալ կարծիքի վրա:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը. սա պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Դա, իհարկե, չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն դրա հավանականության աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած³:

¹ Տե՛ս Մարգար Հակոբյանի վերբերյալ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը:

² Տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶՌԴ/0632/01/01 որոշման 14-րդ կետը:

³ Տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/025201/13 որոշումը:

Իհարկե չենք սխալվի, եթե ասենք, որ հանցավորության դեմ պայքարի պրակտիկայի համար չկա ավելի հավաստի ուղեցույց, քան անմեղության կանխավարկածի անվերապահ ընդունումը և ճիշտ ընկալումը: Այս սկզբունքի գոյությամբ է պայմանավորվում անձի դրությունը հասարակության և պետության մեջ, սկզբունքի ճիշտ գործելուց է կախված այն, թե արդյոք անհատի իրավունքները և ազատությունները համարվում են բարձրագույն արժեք տվյալ պետությունում¹: Սակայն անմեղության կանխավարկածի սկզբունքի՝ որպես ապացույցների բավարարության գնահատման չափանիշի համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ իրավական կանխավարկածին՝ որպես քրեական դատավարությունում փաստեր հաստատելիս անմեղության կանխավարկածի սկզբունքից թույլատրելի բացառություն: Իրավական կանխավարկածն իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության մասին կանխակալ բնույթի ենթադրություն (մտահանգություն) է, որն ունի հավանականության բարձր աստիճան և ենթակա չէ ապացուցման: Իրավական կանխավարկածը տեղեկատվության պակասի պայմաններում իրականացվող իրավակիրառմանը հաղորդում է որոշակիություն, լրացնում է փաստի վերաբերյալ տեղեկատվության բացը:

Ինչպես նշվում է գրականության մեջ, պաշտպանության կողմից իրականացվող ապացուցման առանձնահատկությունն այն է, որ ոչ՝ մեղադրյալը, ոչ՝ պաշտպանը պարտավորված չեն ապացուցելու իրենց պնդումները, պաշտպանության կողմին բավարար է **հիմնավորված**, այսինքն՝ **փաստարկված** կասկածներ սերմանել մեղադրանքի ապացուցվածության նկատմամբ, որոնք էլ օրենքի ուղղակի պահանջով դատարանի կողմից մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Հետևաբար, երբ գործի քննության կամ լուծման ընթացքում ինչ-որ հանգամանք կասկած է հարուցում, կամ երբ այս կամ այն փաստը կարող է տարբեր ձևերով մեկնաբանվել կամ հասկացվել, կամ երբ այս կամ այն ապացույցի հավաստիության վերաբերյալ առկա են կասկածներ, պետք է կայացվի այնպիսի որոշում, որը, ինչպես նշում է Մ. Ս. Ստրոգովիչը, հօգուտ մեղադրյալի է²:

Չնայած որ դատական քննության փուլում գլխավորը մեղադրանքի հիմքում դրված վարկածն (հավաստի դատողություն) է, քանի որ հենց դա է դատական քննության առարկան, սակայն այդ վարկածը հիմնավորելով՝ մեղադրողը միևնույն ժամանակ պետք է ապացուցի մյուս բոլոր վարկածների անհավանականությունը (ոչ հնարավոր լինելը), ինչի համար մեղադրողին անհրաժեշտ է դասակարգել բոլոր առաջ քաշված վարկածներն ու դրանցից յուրաքանչյուրի համար գտնել համապատասխան հակափաստարկներ³:

Սակայն հարց է առաջանում՝ արդյոք մեղադրողը պարտավոր է հերքել պաշտպանության կողմի ներկայացրած ցանկացած պնդում: Հերքումը տրամաբանական գործընթաց է, որի նպատակը հակառակ կողմի ներկայացրած վարկածի կեղծ կամ չհիմնավորված լինելու հանգամանքի հաստատումն է: Հերքումն ուղղված է հակառակ կողմի ներկայացրած ապացույցների փլուզմանը:

Պաշտպանի դատավարական խնդիրը քրեական դատավարությունում մեղադրյալի շահերի պաշտպանությունն է: Հենց այդ նպատակով բերվում են փաստարկներ՝ ուղղված մեղադրանքի հերքմանը, մեղադրանքի ծավալի նվազեցմանն ու արարքի իրավաբանական որակման փոփոխությանը կամ նախատեսվող պատժի մեղմացմանը: «Փաստարկ» հասկացության նպատակը բանավոր մրցակցային դատաքննության պրոցեսում դատական ապացուցման յուրահատկության արտացոլումն է: Քանի որ պաշտպանը փաստորեն զրկված է մեղադրյալի հետ հավասար ապացույցներ ներկայացնելու իրավական հնարավորությունից, հենց փաստարկ-

¹ Տե՛ս **В. М. Савицкий**, Презумпция невиновности, Москва, 1997, էջ 2:

² Տե՛ս <https://www.sovremennoepravo.ru/m/articles/view>

³ Տե՛ս **З. Ш. Гатауллин**, Опровержение прокурором доводов защиты, М., 2003:

ներն են դառնում նրա հիմնական գենքը մեղադրողի հետ դատական վեճում: Սակայն, ինչպես արդեն վերևում նշվեց, պաշտպանության կողմի ներկայացրած պնդումները պետք է լինեն հիմնավորված, փաստարկված:

Փաստական կանխավարկածի գաղափարի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն անմեղության կանխավարկածի բացարձակությունը մեղմելու միջոց է այն դեպքում, երբ որևէ հանգամանքի առկայությունը ողջամտորեն և օբյեկտիվորեն ենթադրվում է: Այն վարույթն իրականացնող մարմնին ազտում է պաշտպանության կողմի անողջամիտ պատճառաբանությունները հերքելու պարտականությունից՝ հատկապես տեղեկատվության պակասի պայմաններում:

Փաստական կանխավարկածի հիմնական բնութագրիչը դրա օբյեկտիվ և սահմանափակ բնույթն է: Կանխավարկածի օբյեկտիվությունն արտայատվում է նրանում, որ այն հիմնվում է բացառապես հաստատված, օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստական հանգամանքների վրա և ողջամտորեն բխեցվում է դրանցից: Վերացական կանխավարկած քրեական դատավարությունում գոյություն ունենալ չի կարող:

Կանխավարկածը պայմանավորող հանգամանքների շրջանակը չի կարող սպառիչ լինել. դրանք արտահայտվում են հանցագործության իրադրության մեջ և կապ ունեն հանցագործության ժամանակի, տեղի, եղանակի և այլնի հետ:

Փաստի կանխավարկածի սահմանափակ բնույթն արտահայտվում է նախ նրանում, որ դրա կիրառումը չի կարող չեզոքացնել անմեղության կանխավարկածի սկզբունքը, և բացի այդ, ինչպես բխում է նաև Եվրոպական դատարանի իրավունքից, իրավական և փաստական կանխավարկածները որպես կանոն թույլատրելի են սահմանափակ շրջանակի հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ որպես դրանց դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ:

«Ֆամ Հոանգն (Pham Hoang) ընդդեմ Ֆրանսիայի» գործով մեղադրյալը ձերբակալվել էր Ֆրանսիա հերոին ներկրելիս: Ֆրանսիական օրենսդրությունը նախատեսում է, որ արգելված ապրանքների ներկրումը, այդ թվում՝ հերոինի, ենթադրվում է ապօրինի, եթե այդ ապրանքը ներկրող անձը հակառակը չի ապացուցել, օրինակ՝ այն դեպքում, երբ ներկայացվում են բավարար արդարացնող փաստաթղթեր, կամ երբ ապացուցվում է, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում կամ այնպիսի սխալի հետևանք է, որից հնարավոր չէ խուսափել: Ներկայացվող գործում պաշտպանության կողմը ոչ մի նման արդարացնող ապացույց չէր ներկայացրել, իսկ մեղադրյալը հրաժարվել էր որևէ բացատրություն տալուց: Եվրոպական դատարանը, քննելով գործը, գտավ, որ որևէ անթույլատրելի բան չկա, որ այն մարդը, որ իր տիրապետության տակ ունի այնպիսի գույք, որը արգելված է, պետք է բավարար ձևով բացատրի այդ փաստը, հակառակ դեպքում անձը մեղավոր կհամարվի¹:

Դրական փաստերը, որոնք ենթադրաբար կարող էին հերքել մեղադրյալի մոտ թմրամիջոցների պատահական կամ օրինական լինելու հանգամանքը հերքելու կամ հաստատելու հնարավորությունը, գործնականում ֆրանսիական իշխանության համար անհասանելի էր: Մեղադրյալի բացատրությունների բացակայության պայմաններում դրանք պետք է փնտրվեին արտասահմանյան երկրների տարածքներում և անորոշ ժամանակահատվածում: Դրան հակառակ՝ դրական փաստերի բացահայտումը թույլ է տալիս մեղադրանքի կողմին ապահովել ապացուցման հիմնական պարտականությունը²:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սկզբունքորեն չի բացառում ազգային օրենսդրությունում իրա-

¹ St´u Pham Hoang V. France 25 սեպտեմբերի 1992, գանգատ թիվ 13191/87:

² St´u Калиновский К. Б, Смирнов А. В. Презумпции в уголовном процессе, //Российское правосудие. Москва, 2008. N 4, էջեր 68-74:

վական կամ փաստական կանխավարկածների գոյությունը, որոնց ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա: Այնինչ ցանկացած դրույթ, որը սահմանում է անմեղության ապացուցման պարտականության փոխանցում կամ հնարավոր է համարում մեղադրյալի դեմ գործող կանխավարկածի կիրառումը, պետք է սահմանափակված լինի «բանական սահմաններով՝ հաշվի առնելով այն ամենի կարևորությունը, ինչը մեղադրյալի համար դրված է խաղասեղանին, և ինչը ապահովում է նրա պաշտպանությունը»¹:

Չնայած վերը ներկայացված վերլուծությանը՝ պրակտիկայում բազմիցս հանդիպում են դեպքեր, երբ դատարանները սխալ են գնահատում ներկայացված ապացույցները, ինչի հետևանքով չհիմնավորված դատական ակտեր են կայացվում:

Այսպես, գործերից մեկով մեղադրյալը համացանցի միջոցով պատվիրել էր մի քանի տեսակի թմրանյութ, իր այլուրեքությունն ապահովելու նպատակով փորձել էր թմրանյութերը ստանալ տարբեր անձանց տվյալներով՝ ի սկզբանե նրանցից թաքցնելով իրականությունը: Թե՛ նախաքննական, թե՛ դատաքննական ցուցմունքներում պնդել էր՝ թե տեղյակ չի եղել, որ իր պատվիրած նյութերը թմրանյութեր են և ոչ թե էներգետիկ հավելումներ, իսկ այլ անձանց հասցեներով պատվիրելը հիմնավորել էր ՌԴ քաղաքացի լինելով, թե իբր ցանկացել է խուսափել առաքման հետ կապված հնարավոր խնդիրներից:

Թե՛ առաջին ատյանի և թե՛ վերաքննիչ դատարանները, հետազոտելով գործում առկա նյութերը, հանգել են այն եզրակացության, որ անձին առաջադրված մեղադրանքը չի ապացուցվել, նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառված են, հետևաբար անհրաժեշտ են գտել փաստել անձի անմեղությունը և կայացրել են արդարացման դատավճիռ:

Ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել մեղադրանքի հիմքում դրված իրեղեն ապացույց ճանաչված փոստային առաքումների ծրարները, այլ փաստաթուղթ ճանաչված «Հայփոստ» ՓԲԸ-ի տեղեկանքների պատճենները, համաձայն որոնց՝ համապատասխան անձանց անուններով ստացվել են փոստային առաքումներ, փորձագիտական եզրակացությունները, ըստ որոնց՝ պատվիրված նյութերը թմրանյութ են եղել, մեղադրյալից վերցված փորձանմուշներում թմրանյութեր լինելու փորձաքննությամբ հաստատված հանգամանքը և կայացրել արդարացման դատավճիռ: Փաստորեն նման պայմաններում ապացույցների փոխկապակցված համակցությամբ հաստատված հանգամանքների փոխարեն՝ դատարանների կողմից առավելություն է տրվել մոլորության մեջ և խաբված լինելու՝ մեղադրյալի ակնհայտ անարժանահավատ և անտրամաբանական ցուցմունքներին: Սույն որոշումների մեջ նշվել է նաև, որ թույլ է տրվել մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի խախտում, քանի որ մեղադրական եզրակացությունում բացակայում են ի պաշտպանություն ամբաստանյալի բերվող փաստարկների հերքման մասին դատողությունները: Այնինչ, ինչպես վերը արդեն ներկայացվեց, վարույթն իրականացնող մարմինները չեն կրում պաշտպանության կողմի ներկայացրած անհիմն և անողջամիտ փաստարկների հերքման պարտականությունը:

Թեև արդեն նշվեց, որ իրավական և փաստական կանխավարկածները որպես կանոն թույլատրելի են սահմանափակ շրջանակի հանցագործությունների վերաբերյալ գործերով, անհրաժեշտ է ավելացնել, որ այդ շարքում են նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները, և փաստական կանխավարկածի գոյությունն արդեն իսկ արտահայտված է այդ հանցագործությունների մեկնաբանության վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավունքում:

¹ St´u Salabiaku v. France, 7 հոկտեմբերի 1988, գանգատ թիվ 10519/83, 28-րդ կետ:

ОПРОВЕРЖЕНИЕ ПРЕДСТАВЛЕННОЙ ВЕРСИИ С НАМЕРЕНИЯМ ЗАЩИТЫ, КАК ХАРАКТЕРНЫЙ ЭЛЕМЕНТ ДОКАЗАТЕЛЬСТВЕННОГО ПРОЦЕССА

Давид Мелконян

*Заместитель Генерального прокурора РА,
Кандидат юридических наук, доцент*

Гаяне Меликян

Помощник заместителя Генерального прокурора РА

В статье рассматриваются вопросы, связанные с доказыванием в уголовном процессе. Доказывание осуществляется уполномоченными субъектами. Предметом доказывания в уголовном процессе служит ограниченный круг фактов и обстоятельств, характеризующих конкретное единичное событие объективной действительности, установление которых необходимо для правильного разрешения уголовного дела. В статье также рассматривается принцип презумпции невиновности, обсуждается соотношение обсуждаемого принципа и бремени доказательств в контексте тенденций развития современного права. Обращается внимание на сущность презумпции.

THE PRACTICE OF DENIAL OF A VERSION FOR DEFENSIVE CONSIDERATIONS AS A CHARACTERISTIC ELEMENT OF PROOF

Davit Melkonyan

*Deputy Prosecutor General of the RA,
Candidate of Legal Sciences, Docent*

Gayane Melikyan

Assistant of Deputy Prosecutor General of the RA

The article discusses issues related to proving in criminal proceedings. Proving is carried out by the authorized entities. The subject of proving in criminal proceedings is a limited range of facts and circumstances that characterize a particular single event of objective reality, the establishment of which is necessary for the proper solution of the criminal case. The article also refers to the principle of presumption of innocence. The interrelation between the principle and burden of proof is discussed in the context of the modern developments of law. The article refers to the concept of presumption.

Բանալի բառեր – ապացուցում, ապացույցների հավաքում, ստուգում և գնահատում, մեղադրող, դատարան, ապացուցման գործընթացի արդյունք, անմեղության կանխավարկած

Ключевые слова: доказывание, собирание, проверка и оценка доказательств, обвинитель, суд, результат процесса доказывания, презумпция невенности

Key words: proving, collecting, validation and evaluation of evidence, accuser, court result of proving process, presumption of innocence